

ՊԱՊՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՊԱՊՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 7205/11)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

11 հունվարի 2018թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական
փոփոխությունների:*

Պապոյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ *դատավորներ,*

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

2017 թվականի դեկտեմբերի 12-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի
տկն Մարգարիտա Պապոյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի
Հանրապետության՝ 2010 թվականի դեկտեմբերի 29-ին Դատարան
ներկայացված գանգատի (թիվ 7205/11) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան
տկն Ա. Բեգլարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը
(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական
դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր
ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2016 թվականի հուլիսի 11-ին վերջնական վճռի չկատարման վերաբերյալ բողոքն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1949 թվականին եւ ապրում է Երեւանում:

5. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

6. Ըստ երեւոյթին, դիմումատուն օտարման ենթակա տարածքում գտնվող հողակտորի վրա փոքր կրպակ է ունեցել: Նաեւ պարզվում է, որ իշխանությունները քանդել են այդ կրպակը՝ թիվ 1151-Ն որոշման շրջանակներում այդ տարածքում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

7. 2002 թվականի հոկտեմբերի 10-ին, որպես դիմումատուի կրպակի համար փոխհատուցում, Երեւանի քաղաքապետն ընդունել է թիվ 1785-Ա որոշումը՝ նրան շնորհելով Երեւանի Կենտրոն վարչական շրջանի նշված հասցեում գտնվող 5 քառ. մետր հանրային օգտագործման հողակտորը յոթ տարով վարձակալելու եւ այդ հողակտորի վրա իր կրպակը կառուցելու ու աշխատեցնելու իրավունք: Նույն որոշմամբ քաղաքապետը Կենտրոն վարչական շրջանի տեղական իշխանություններին լիազորել է դիմումատուի հետ կնքել վարձակալության պայմանագիրը:

8. 2002 թվականի դեկտեմբերի 17-ին դիմումատուն ստացել է թիվ 1785-Ա որոշմամբ նշված հողակտորի շինարարության թույլտվությունը:

9. 2006 թվականի դեկտեմբերի 26-ին եւ 2007 թվականի օգոստոսի 24-ին՝ թիվ 1785-Ա որոշման կատարման վերաբերյալ դիմումատուի կողմից հարցումներ կատարելուց հետո, Կենտրոն վարչական շրջանի իշխանություններն առաջարկել են, որ դիմումատուն իր հարցումներն ուղղի Երեւանի քաղաքապետին, մինչդեռ 2007 թվականի մայիսի 1-ին եւ սեպտեմբերի 6-ին վերջինս առաջարկել է, որ դիմումատուն իր հարցումներն ուղղի Կենտրոն վարչական շրջանի իշխանություններին:

10. 2008 թվականի փետրվարի 26-ին դիմումատուն քաղաքապետի եւ Կենտրոն վարչական շրջանի դեմ հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով կատարել թիվ 1785-Ա որոշումը:

11. 2008 թվականի հուլիսի 30-ին Վարչական դատարանը բավարարել է դիմումատուի պահանջը եւ պարտավորեցրել Երեւանի քաղաքապետին դիմումատուի հետ կնքել 1785-Ա որոշման մեջ նշված պայմանագիրը: Որեւէ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, եւ այդ վճիռը 2008 թվականի օգոստոսի 30-ին դարձել է վերջնական:

12. 2008 թվականի սեպտեմբերի 9-ին Վարչական դատարանը 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կապակցությամբ տվել է կատարողական թերթ:

13. 2008 թվականի սեպտեմբերի 24-ին Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (ԴԱՀԿ) կատարողական վարույթ է հարուցել Երեւան քաղաքի [իշխանությունների] դեմ՝ պարտավորեցնելով տասն օրվա ընթացքում դիմումատուի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիրը:

14. 2009 թվականի հունիսի 17-ին Երեւանի քաղաքապետարանը դիմումատուին առաջարկել է բանակցություններ սկսել: Այնուամենայնիվ, դիմումատուն իր՝ 2009 թվականի հունիսի 30-ի նամակով հրաժարվել է Քաղաքապետարանի հետ բանակցելուց:

15. 2009 թվականի մարտի 2-ին, ապրիլի 23-ին, հուլիսի 3-ին եւ 31-ին, նոյեմբերի 23-ին, դեկտեմբերի 23-ին, 2010 թվականի մարտի 17-ին, 18-ին եւ ապրիլի 7-ին դիմումատուի՝ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարման վերաբերյալ հարցումների հիման վրա հարկադիր կատարողները տեղեկացրել են դիմումատուին, որ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարումն ընթացքի մեջ է, եւ որ նրան կտեղեկացնեն արդյունքների մասին:

16. 2010 թվականի հունիսի 16-ին դիմումատուն ԴԱՀԿ-ի դեմ հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով, որ Դատարանը Ծառայությանը պարտավորեցնի կատարել 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը:

17. 2010 թվականի հունիսի 22-ին Վարչական դատարանը դիմումատուի պահանջի ընդունումը մերժել է՝ դիմումատուի՝ դատավարական իրավունակություն չունենալու հիմքով: Վարչական դատարանը պատճառաբանել է, որ դիմումատուն չի ապացուցել, որ իր իրավունքները խախտվել են ԴԱՀԿ-ի վարչարարության արդյունքում: Վարչական դատարանը նշել է, որ ԴԱՀԿ-ն որոշակի գործողություններ է իրականացրել 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարումն ապահովելու նպատակով, եւ որ կատարողական վարույթը դեռ ընթացքի մեջ է: Վարչական դատարանի 2010 թվականի հունիսի 22-ի որոշումը 2010 թվականի օգոստոսի 25-ին անփոփոխ է թողնվել բարձրագույն դատական ատյանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից:

18. 2010 թվականի հոկտեմբերի 21-ին եւ նոյեմբերի 4-ին՝ դիմումատուի կողմից հարցում կատարելուց հետո, հարկադիր կատարողը պատասխանել է, որ կատարումն ընթացքի մեջ է, եւ որ դիմումատուին կտեղեկացնեն արդյունքների մասին:

19. 2011 թվականի հունվարի 24-ին, թիվ 1785-Ա որոշման կատարման վերաբերյալ դիմումատուի հարցումների համաձայն, Երեւանի քաղաքապետը նրան տեղեկացրել է հողային օրենսդրության փոփոխության մասին եւ հիշեցրել դիմումատուին, որ վերջինս պետք է հողի վարձակալության պայմանագիր կնքի Կենտրոն վարչական շրջանի հետ:

20. 2011 թվականի մայիսի 3-ին Քաղաքապետարանը դիմումատուին առաջարկել է քաղաքաշինության տեսանկյունից ընդունելի երեք տարբեր հողակտորներ: Այնուամենայնիվ, Քաղաքապետարանին ուղղված նամակով դիմումատուն հրաժարվել է հողակտորներից որեւէ մեկն ընդունելուց:

21. 2011 թվականի օգոստոսի 4-ին ԴԱՀԿ-ն, հիմնվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի վրա, վարույթն ավարտելու մասին որոշում է կայացրել այն հիմքով, որ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարումն անհնարին էր դարձել: Այն հիմնավորել է, որ Երեւանի քաղաքապետը դիմումատուին ուղղված՝ 2009 թվականի հունիսի 17-ի գրությամբ առաջարկել է, որ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարման համար դիմումատուն ներկայանա Երեւանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչություն, սակայն դիմումատուն դա չի արել:

22. 2012 թվականի փետրվարի 27-ին դիմումատուն ԴԱՀԿ-ի դեմ հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով 2011 թվականի օգոստոսի 4-ի որոշումն անվավեր ճանաչել, ինչպես նաեւ ԴԱՀԿ-ին պարտավորեցնել կատարել 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը:

23. 2013 թվականի փետրվարի 15-ին Վարչական դատարանը մերժել է դիմումատուի առաջին պահանջը՝ հիմնավորելով, որ ԴԱՀԿ-ի 2011 թվականի օգոստոսի 4-ի որոշումն անվավեր ճանաչելու համար բավարար հիմքեր չկան: Այն մերժել է դիմումատուի երկրորդ պահանջի քննությունը:

24. 2012 թվականի մայիսի 14-ին դիմումատուն ԴԱՀԿ-ի դեմ հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ԴԱՀԿ-ին կատարել 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը:

25. 2013 թվականի հունիսի 12-ին Վարչական դատարանը կարճել է վարույթը՝ իրավագործության բացակայության հիմքով: Որոշումն անփոփոխ է թողնվել բարձրագույն դատական ատյանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 18-ին:

26. 2013 թվականի հուլիսի 18-ին դիմումատուն հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով, *inter alia* (ի թիվս այլնի), որ ԴԱՀԿ-ն վերսկսի 2011 թվականի օգոստոսի 4-ին ավարտված վարույթը: 2013 թվականի դեկտեմբերի 4-ին Վարչական դատարանը մերժել է դիմումատուի պահանջը՝ պատճառաբանելով, որ անհնարինության հիմքով ավարտված վարույթը վերսկսելու համար որեւէ իրավական հիմք չկա:

27. 2014 թվականի մարտի 3-ին դիմումատուն ԴԱՀԿ-ի դեմ հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով, որ ԴԱՀԿ-ի՝ նոր կատարողական վարույթ հարուցելը մերժելու մասին 2014 թվականի փետրվարի 10-ի որոշումն անվավեր ճանաչվի, եւ որ ԴԱՀԿ-ն պարտավորեցվի նոր վարույթ սկսել:

28. 2016 թվականի սեպտեմբերի 28-ին Վարչական դատարանը բավարարել է դիմումատուի առաջին պահանջը՝ ԴԱՀԿ-ի 2014 թվականի փետրվարի 10-ի որոշումն անվավեր ճանաչելով: Ինչ վերաբերում է դիմումատուի երկրորդ պահանջին, Վարչական դատարանն այդ մասով վարույթը կարճել է՝ իրավագործության բացակայության հիմքով:

29. 2016 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռն վերաբերող գործը դեռեւս քննվում է Վերաքննիչ վարչական դատարանի կողմից:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

30. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 41-րդ հոդվածով սահմանվում են հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթն ավարտելու հիմքերը: 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

31. Դիմումատուն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով բողոքել է Վարչական դատարանի 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը չկատարելու մասով: Այդ դրույթներն այնքանով, որքանով վերաբերելի են, շարադրված են հետեւյալ բովանդակությամբ՝

Հոդված 6

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք ...»:

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

32. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը:

Ա. Ընդունելիությունը

33. Դատարանը նշում է, որ այս գանգատը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուն

34. Դիմումատուն պնդել է, որ 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը չկատարելը համարվում է իր՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտում: Վարչական դատարանն իր՝ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռով պարտավորեցրել է Քաղաքապետարանին դիմումատուի հետ կնքել 2002 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1785-Ա որոշման մեջ նշված պայմանագիրը: Ներպետական իշխանություններն իրավունք չունեին շեղվելու այդ հստակ վճիռից: Դիմումատուին առաջարկվող մյուս հողակտորներն անընդունելի են եղել, քանի որ դրանք գտնվել են վճռում նշված համապատասխան հասցեից տարբերվող վայրում եւ այնպիսի տարածքում,

որտեղ ձեռնարկատիրությամբ զբաղվելը պակաս շահութաբեր կլիներ, քան վճռում նշված հասցեում: Դիմումատուն առաջարկել է ինը տարբեր ընդունելի նոր տեղանքներ, սակայն Քաղաքապետարանը դրանք բոլորը մերժել է: Չնայած դիմումատուն ձեռնարկել է վճռի կատարմանն ուղղված բոլոր հնարավոր քայլերը, վճիռն ավելի, քան ութ տարի մնացել է չկատարված: Կատարողական վարույթն ավարտելով՝ ներպետական իշխանությունները խախտել են դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքը:

35. Իր օգտին կայացված վճիռն ավելի, քան ութ տարի կատարելու անհնարինությունը նաեւ համարվում է դիմումատուի գույքային իրավունքներին միջամտություն: Նա պարբերաբար դիմել է տարբեր պետական մարմիններ՝ պահանջելով վճռի կատարումը, բայց ապարդյուն: Հետեւ աբար, դիմումատուի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքները նույնպես խախտվել են:

բ) Կառավարությունը

36. Կառավարությունը պնդել է, որ ներպետական իշխանությունները ձեռնարկել են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պարտադիր ուժ ունեցող վճիռը կատարելու համար: 2008 թվականի հուլիսի 30-ին Վարչական դատարանը դիմումատուի օգտին վճիռ է կայացրել եւ պարտավորեցրել Քաղաքապետարանին կատարել թիվ 1785-Ա որոշումը: 2008 թվականի սեպտեմբերի 9-ի կատարողական թերթը ԴԱՀԿ՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելու լիազորություն ունեցող միակ պետական մարմին ներկայացնելուց հետո հարկադիր կատարողն անմիջապես կատարողական վարույթ է հարուցել եւ պահանջել, որ Քաղաքապետարանը կատարի 2008 թվականի հուլիսի 30-ի վճռով նախատեսված պահանջները: 2009 թվականի հունիսի 17-ին Քաղաքապետարանը դիմումատուին առաջարկել է բանակցություններ սկսել, բայց դիմումատուն մերժել է այդ առաջարկը: 2011 թվականի մայիսի 3-ին

Քաղաքապետարանը դիմումատուին առաջարկել է քաղաքաշինության տեսանկյունից ընդունելի երեք տարբեր հողակտորներ, սակայն դիմումատուն հրաժարվել է հողակտորներից որեւէ մեկն ընդունելուց: Քանի որ վճիռը կատարելն անհնար էր դարձել, ԴԱՀԿ-ն 2011 թվականի օգոստոսի 4-ին կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում է կայացրել:

37. Կառավարությունը պնդել է, որ ինքը դիմումատուն է խոչընդոտներ ստեղծել 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարման համար՝ անտեսելով իշխանությունների՝ նրան մեկ այլ հողակտոր տրամադրելուն ուղղված ջանքերը: 2009 թվականից ի վեր կրպակների՝ տվյալ տարածքում չգտնվելը եւ 2011 թվականից ի վեր Երեւանի քաղաքային փողոցներում, հատկապես մայթերին գտնվող կրպակները քանդելը եղել է քաղաքային քաղաքականության մասը: Քաղաքականության այդպիսի փոփոխության արդյունքում դիմումատուին վճռում նշված տարածքում հողակտոր առաջարկելն անհնար էր դարձել: Առաջարկված երեք հողակտորները գտնվել են Երեւանի նմանատիպ, շահութաբեր տարածքներում: Այսպիսով, վճռի կատարման ձգձգումը պայմանավորված է եղել դիմումատուի՝ իշխանությունների հետ համագործակցելու ցանկության բացակայությամբ: Ուստի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում տեղի չի ունեցել:

2. *Դատարանի գնահատականը*

38. Դատարանի՝ 6-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքն անիրական կլիներ, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումը մնար չգործող՝ ի վնաս կողմերից մեկի (տե՛ս *Հորնսբին ընդդեմ Հունաստանի* [*Hornsby v. Greece*], 1997 թվականի մարտի 19, §40, *Վճիռների եւ որոշումների*

մասին զեկույցներ 1997-II): Դատարանի արդյունավետ մատչելիությունը ներառում է դատարանի որոշման՝ առանց անհարկի ձգձգումների կատարման իրավունքը:

39. Նույն համատեքստում դիմումատուի՝ իր օգտին կայացված վճռի կատարմանը ողջամիտ ժամկետում հասնելու անհնարինությունը համարվում է միջամտություն ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքի իրականացմանը, ինչպես սահմանված է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասությամբ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վոյտենկոն ընդդեմ Ուկրաինայի* [*Voytenko v. Ukraine*], թիվ 18966/02, § 53, 2004 թվականի հունիսի 29): Հետեւաբար, պարտադիր ուժ ունեցող վճռի կատարումն անհիմն երկար ձգձգելը կարող է խախտել Կոնվենցիան (տե՛ս *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* [*Burdov v. Russia*], թիվ 59498/00, ՄԻԵԴ 2002-III. *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (թիվ 2)* [*Burdov v. Russia (no. 2)*], թիվ 33509/04, § 65, ՄԻԵԴ 2009 թվական եւ *Յուրի Նիկոլայեւիչ Իվանովն ընդդեմ Ուկրաինայի* [*Yuriy Nikolayevich Ivanov v. Ukraine*], թիվ 40450/04, §§ 50-53, 2009 թվականի հոկտեմբերի 15):

40. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նկատում է, որ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռով, որը վերջնական է դարձել 2008 թվականի օգոստոսի 30-ին, Վարչական դատարանը որոշում է կայացրել դիմումատուի օգտին: 2008 թվականի սեպտեմբերի 9-ին Վարչական դատարանն այդ վճռի կապակցությամբ տվել է կատարողական թերթ: 2008 թվականի սեպտեմբերի 24-ին ԴԱՀԿ-ն կատարողական վարույթ է հարուցել Երեւան քաղաքի [իշխանությունների] դեմ՝ պարտավորեցնելով տասն օրվա ընթացքում դիմումատուի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիրը: 2009 թվականի հունիսի 17-ին Քաղաքապետարանը դիմումատուին առաջարկել է բանակցություններ սկսել: 2011 թվականի մայիսի 3-ին Քաղաքապետարանը դիմումատուին առաջարկել է քաղաքաշինության տեսանկյունից ընդունելի երեք

տարբեր հողակտորներ, սակայն դիմումատուն հրաժարվել է հողակտորներից որեւէ մեկն ընդունելուց: Հետեւաբար, 2011 թվականի օգոստոսի 4-ին ԴԱՀԿ-ն վարույթն ավարտելու մասին որոշում է կայացրել այն հիմքով, որ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի կատարումն անհնարին էր դարձել (տե՛ս վերելում 14-րդ եւ 20-21-րդ պարբերությունները): Դիմումատուն մի քանի անգամ փորձել է Վարչական դատարանում վիճարկել այդ որոշումը, սակայն ապարդյուն (տե՛ս վերելում 22-29-րդ պարբերությունները):

41. Դատարանը նշում է, որ կողմերը կարծես համաձայն են, որ Վարչական դատարանի 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը մի քանի տարի մնացել է եւ դեռեւս մնում է չկատարված: Դիմումատուին հողի վարձակալության վերաբերյալ բանակցելու հնարավորություն է տրվել, եւ նրան առաջարկվել են երեք տարբեր հողակտորներ պակաս շահավետ տարածքներում, սակայն մինչ օրս դիմումատուի եւ Երեւան քաղաքի [իշխանությունների] միջեւ տվյալ վճռում նշված տարածքի վերաբերյալ վարձակալության պայմանագիր չի կնքվել:

42. 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը, որը կայացվել էր ի օգուտ դիմումատուի, մնացել է չկատարված 2008 թվականի հոկտեմբերից մինչ օրս, այսինքն՝ ավելի, քան ութ տարի եւ տասնմեկ ամիս: Կառավարությունը չի ներկայացրել որեւէ փաստարկ այդ ուշացումը հիմնավորելու համար: Հետեւաբար, Դատարանը գտնում է, որ Հայաստանի իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ՝ վերջնական վճիռը կատարելու համար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները զրկել են սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժից:

43. Հետեւաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

44. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

45. Դիմումատուն պահանջել է 140 000 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում, եւ 125 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

46. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի՝ նյութական վնասի մասով պահանջը հիպոթետիկ է, քանի որ գործի նյութերում այդպիսի կորուստների մասով որեւէ ապացույց չկա: Դիմումատուն ցույց չի տվել եկամտի կորստի եւ ենթադրյալ խախտումների միջեւ պատճառահետեւանքային կապը: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, Կառավարությունը համարել է, որ դիմումատուի պահանջած գումարը չափազանցված է եւ պետք է նվազեցվի:

47. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ, հետեւաբար, այն մերժում է այս պահանջը: Մյուս կողմից, Դատարանը գտնում է, որ հայտնաբերված խախտման հետեւանքով դիմումատուն որոշակի չափով ոչ նյութական վնաս է կրել: Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա, դիմումատուին շնորհում է 3 600 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

48. Դիմումատուն նաեւ պահանջել է 996 եվրո՝ որպես հատուցում ներպետական դատարաններում եւ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

49. Կառավարությունը համարել է, որ աշխատանքային ժամերի վերաբերյալ հստակեցում չի արվել՝ ինչպես պահանջվում է Դատարանի կանոնակարգի 60-րդ կանոնով: Եվ ոչ էլ որեւէ կերպ հիմնավորվել են փորձագետների, ֆաքսային, փոստային, պատճենահանման եւ տեղափոխման ծառայությունների մասով ծախսերը: Ամեն դեպքում, ծախսերի եւ ծախքերի համար պահանջվող գումարը չափազանցված է եղել եւ պետք է նվազեցվի:

50. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը, մերժում է ներպետական վարույթում, ինչպես նաեւ Դատարանի վարույթում կրած ծախսերի եւ ծախքերի մասով պահանջը:

Գ. Ջկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

51. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում ոչ նյութական վնասի դիմաց պետք է դիմումատուին վճարի 3 600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո), որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի հունվարի 11-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ

Ալեշ Պեյխալ

Քարտուղարի տեղակալ

Նախագահ